տամբ քրդերին: Եւ տաճկի ասկերը վարւում էր նոյն բարբարոսութեամբ, որպէս պարսիկները: Որովհետեւ տաճկի տիրապետելը կամ իսպառ չէր յաջողւում, կամ եթէ յաջողւում էր, լինում էր ժամանակաւոր, եւ ասկերը, դատարկաձեռն ետ չդառնալու համար, յափշտակում էր ամէն հանդիպածը:

Ահա՛, այսպիսի դրութեան մէջ էին այն ժամանակ Արզրումի, Բայազեդի, Հաղբակայ, Վանի, Բաղէշի, Մուշի, Շատախու, Սասնոյ, Խիզանու, Մոգաց, Չարսանջախու, Քեղոայ գաւառները, իրանց բազմաթիւ հայ բնակիչներով: Նրանց տիրում էր մի աւազակ ցեղ, որի աջ ձեռքը — իր սուրն էր, որի ոտքերը-իր նժոյգն էր, որի տունը-իր թեթեւ չադրը, որի հայրենիքը-ամեն տեղ, որի հունձքը-թշոառ մարդկութիւնը, որի օրէնքը եւ իրաւունքը — իր կամքը, որի կեանքի նպատակը — փշրել, խորտակել եւ ոչնչացնել, որի գործող ոգին-իր երկաթի սիրտը, վայրենի կատաղութիւնը եւ գազանական յանդգնութիւնը...

## ԻԶ. ԻՆ՞Չ Է ՊԱՐՍԻԿԸ

Այսքանը բաւական է Վասպուրականի եւ Տարօնի մասին, դառնանք այժմ դէպի Ատրպատականը, այսինքն՝ Պարսկաստանի մասը:

Ես կը յիշեմ Ատրպատական նահանգի այն գաւառները միայն, ուր հայեր էին բնակւում. դրանք էին՝ Սալմաստ, Խոյ, Մագու, Գունեյիստան, Մարանդ, Ուրմի, Սուլդուզ, Սովուխբալախ, Գուխարղան, Մարաղայ, Թաբրիզ, Ղարադաղ, Արդաբիլ: Բացի հայերից, յիշեալ գաւառներում բնակւում էին Ղզըլբաշ կոչուած թուրքերը, որոնք կազմում էին ժողովրդի մեծ մասը, եւ այստեղ ու այնտեղ ցրուած էին՝ հրէաներ, ասորիներ, քրդեր, բոշաներ:

Տիրող ազգը-պարսիկն էր, որոնց մէջ նոյնպէս կային ցեղեր, որպէս էին՝ լաքերը, աւշարները, թաթերը եւ Ղարադաղի զանազան էլաթները, որոնք ընդհանրապէս խիստ հազիւ էին որոշւում միմեանցից թէ տիպերով, թէ սովորութիւններով եւ թէ բարբառներով: Խօսում էին թուրքերէն լեզուով, որ շատ տարբերւում է Օսմանեան տաճկերենից. կրօնքով մահմեդականներ էին եւ պատկանում էին շիայ աղանդին: Կրօնքի հոգեւոր ներկայացուցիչներն էին մօլլաները, չափազանց խորամանկ, փառասէր եւ կեղծաւոր մի հասարակութիւն, որ արտաքին բարեպաշտութեանբ, ծածկոած աւելի ճգնաւորական դիմակով, գրաւել էին ժողովրդի խորին յարգանքը, միեւնոյն ժամանակ մտցրել էին նրա մէջ կոյր սնահաւատութիւն եւ խաւար մոլեռանդութիւն: Նախապաշարմունքները մուսուլմանների մէջ, մահմեդականութեան չպատկանող ազգերի վերաբերութեամբ, հասնում էին խելագարու-